ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) մրցակցության վերահսկողության վարչության հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժնի պետի՝ Վիեննայի միասնական ինստիտուտի կողմից «Առողջ հարկաբյուջետային ինստիտուտներ» թեմայով կազմակերպված դասընթացին մասնակցելու նպատակով Ավստրիայի Հանրապետության քաղաք Վիեննա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակիցների անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

Տաթևիկ Հովհաննիսյան – Հանձնաժողովի մրցակցության վերահսկողության վարչության հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա, 2024 թվականի փետրվարի 17-ից 24-ը ներառյալ:

3. Գործուղման հիմքը.

Վիեննայի միասնական ինստիտուտի կողմից ստացված հրավեր՝ «Առողջ հարկաբյուջետային ինստիտուտներ» թեմայով դասընթացին մասնակցելու համար:

4. Գործուղման նպատակը.

Վիեննայի միասնական ինստիտուտի կողմից կազմակերպված դասընթացին մասնակցություն, ինչպես նաև համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակում:

5. Գործուղման արդյունքները.

Դասընթացների շրջանակներում քննարկվել են հարկաբյուջետային և այլ անկախ խորհուրդների և մարմինների դերը և կարևությունը, ինչպես նաև դրանց՝ կառավարության տարբեր ոլորտներում քաղաքականության վստահելիությունն ու հաշվետվողականությունն ամրապնդելուն միտված գործառույթները: Զեկուցումները հիմնված են եղել համաշխարհային տնտեսության մեջ ընթացող քաղաքական և ակադեմիական քննարկումների և տարբեր երկրներում իրականացված բարեփոխումների գործընթացների և փորձի ուսումնասիրության վրա: Դասընթացների ընթացքում ուսումնասիրվել են անկախ մարմինների կողմից տնտեսական աճի, մրցակցային միջավայրի, գնաճի և պետական եկամուտների վերաբերյալ կանխատեսումների իրականացման մեթոդները և միջազգային փորձը: Ներկայացվել է կառավարության՝ սեփական կանխատեսումների և ենթադրությունների թափանցիկության ու վստահելիության բարելավման վրա անկախ մարմինների գործունեության ազդեցությունը:

Հանձնաժողովում համապատասխան շահագրգիռ կողմերի համար՝ հարկաբյուջետային ինստիտուտների համատեքստում մրցակցության վերաբերյալ նրանց պատկերացումներն ավելի հստակեցնելու համար:

Դասընթացը հիմնված է եղել դասախոսությունների, ակտիվ քննարկումների, ինչպես նաև խմբային աշխատանքների վրա, որոնց ընթացքում դասընթացի շրջանակներում քննարկված հարցերը դիտարկվել են գործնական օրինակների վրա:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ

Դասընթացի շրջանակներում մասնակիցները ծանոթացել են տնտեսական կանխատեսումների իրականացման ժամանակակից արդյունավետ փորձի, որը հնարավորության դեպքում կարելի է կիրառել Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունների և վարչական վարույթների ընթացքում:

Հանձնաժողովի մրցակցության վերահսկողության վարչության հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժնի պետ

Տաթևիկ Հովհաննիսյան

26 փետրվարի 2024թ.